

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի պետական ագրարային համալսարանի լեզվի ուսուցման կենտրոնը (այսուհետև կենտրոն) կազմակերպվել է ՀՊԱՀ գիտական խորհրդի 2001թ. հունսի 4-ի (արձանագրություն 15), 2002թ. մարտի 28 (արձանագրություն 14), որոշումների և ՀՊԱՀ ռեկտորի 2002թ. ապրիլի 1-ի թիվ 153 Կ հրամանի համաձայն:
2. Կենտրոնը ՀՊԱՀ լեզուների ուսուցման և ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման կառուցվածքային ստորաբաժանում է, որը կարող է իրականացնել նաև լեզվական մասնագիտական ուսուցում: Լեզվի կենտրոնի կանոնակարգը ըստ ՀՊԱՀ կանոնադրության 11-րդ կետի հաստատում է ՀՊԱՀ խորհուրդը և գործողության մեջ է դրվում ՀՊԱՀ ռեկտորի հրամանով:
3. Կենտրոնի գործունեությունը իրականացվում է ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, ՀՊԱՀ կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:
4. Լոզվի կենտրոնի հասցեն է՝ ք. Երևան, Տերյան փ. 74:
5. Կենտրոնը գործում է ՀՊԱՀ համահամալսարանային ամբիոնի կարգավիճակով և իր գործունեությամբ հաշվետու է ՀՊԱՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

Լեզվի կենտրոնի խնդիրները

6. Լեզվի կենտրոնը
 - ա) իրականացնում է լեզուների ուսուցման, կրթական, ուսումնամեթոդական գործընթացը, ապահովելով ուսուցում անցած ունկնդիրների կողմից լեզուների տիրապետումը, որը հնարավորություն կտա նրանց հետագա գործունեության ընթացքում օգտվելու անհրաժեշտ մասնագիտական գրականությունից, ինչպես նաև շարունակելու ուսումը արտերկրի ուսումնական հաստատություններում:

- բ) կազմակերպում և անց է կացնում ուսուցումն անցած ունկնդիրների սերտիֆիկացումը.
- գ) սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում կենտրոնի ուսումնական պլանների վերաբերյալ.
- դ) իրականացնում է ուսումնամեթոդական գրականության աուդիո-վիզուալ նյութերի ձեռքբերման և ստեղծման աշխատանքները Հոլանդիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի և այլ համալսարանների հետ համատեղ.
- ե) առաջարկություններ է ներկայացնում կենտրոնում դասավանդող դասախոսական կազմի ձևավորման վերաբերյալ:
- զ) ձևավորում, կազմում է կենտրոնի տարեկան ֆինանսական նախահաշիվը և ներկայացնում ռեկտորատի հաստատմանը.
- է) ապահովում է հաշվետվությունների և օրենսդրությամբ նախատեսված այդ կարգի այլ փաստաթղթերի ճիշտ կազմումը, վարումը, պահպանությունը և պատասխանատվություն է կրում դրա համար
- ը) համալսարանի միջոցով ձեռք է բերվում կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ գույք և պատասխանատվություն է կրում կենտրոնին հատկացված գույքի պահպանության, ճիշտ և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև այդ գույքին պատճառած վնասի համար:
- թ) Լեզվի կենտրոնի ղեկավարման մարմիններն են լեզվի կենտրոնի մեթոդական խորհուրդը, լեզվի կենտրոնի տնօրենը:

Լեզվի կենտրոնի մեթոդական խորհուրդը

7. Լեզվի կենտրոնի մեթոդական խորհուրդը կարգավորում է լեզվի ուսուցման մեթոդական հարցերը:
8. Մեթոդական խորհուրդը ստեղծվում և, լեզվի կենտրոնի տնօրենի ներկայացմամբ, հաստատվում է համալսարանի գիտխորհրդի կողմից: Մեթոդ խորհրդի կազմում ընգրկվում են կենտրոնի տնօրենը, անգլերեն լեզվի երկու մասնագետ և մեկական մասնագետ ֆրանսերեն և գերմաներեն լեզվի, ինչպես

նաև ռեկտորի կողմից նշանակված անձինքով: Գիտխորհրդի որոշումը իրագործվում է ՀՊԱՀ ռեկտորի հրամանով:

9. Լեզվի կենտրոնի ուսումնամեթոդական ծրագրերին ներկայացվող պահանջները սահմանված կարգով որոշվում են պետական կրթական չափանիշներով:
10. Մեթոդական խորհուրդը նիստեր է գումարում ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստեր կարող են գումարվել ՀՊԱՀ ռեկտորի, լեզվի կենտրոնի տնօրենի կամ կենտրոնի մեթոդական խորհրդի անդամների 1/3 նախաձեռնությամբ:
11. Մեթոդական խորհրդի որոշումները ընդունվում են նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցել են խորհրդի անդամների առնվազն 2/3:
12. Լեզվի ուսուցման մեթոդական խորհուրդը
 - ա) Համալսարանի խորհրդին առաջարկություններ է ներկայացնում լեզվի կենտրոնի կառուցվածքային հարցերի վերաբերյալ.
 - բ) սահմանված ժամկետներում քննարկում և հաստատում է դասախոսների աշխատանքային (օրացույցային) պլանները և նրանցից ընդունում հաշվետվություններ
 - գ) առաջարկություններ է ներկայացնում կենտրոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի թեկնածությունների, այլ կազմակերպություններից մասնագետներ հրավիրելու և նրանց հետ համապատասխան պայմանագրեր կնքելու վերաբերյալ:
 - դ) սահմանված կարգով քննարկում և ներկայացնում է ուսումնական պլանները, առարկաների ծրագրերը, հրատարակության ներկայացվող ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկները:
 - ե) կազմակերպում է դիմորդների ընդունելությունը ըստ ընդունված թեստավորման համակարգի
 - զ) քննարկում է կադրերի պատրաստման և որակավորման վերաբերյալ հարցերը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

Լեզվի կենտրոնի կառավարումը

13. Լեզվի կենտրոնը ղեկավարում է տնօրենը, որը սահմանված կարգով ընտրվում է ՀՊԱՀ գիտական խորհրդի կողմից: Գիտական խորհրդի այդ որոշումը ձևակերպվում և գործադրվում է ռեկտորի հրամանով:

14. Տնօրենն իր գործունեությամբ անմիջականորեն հաշվետու է ՀՊԱՀ ուսումնական հարցերի գծով պրոռեկտորին:

15. Կենտրոնի տնօրենը

ա) ղեկավարում է կենտրոնի ուսումնական, մեթոդական և ուսումնա-դաստիարակչական ողջ գործունեությունը և պատասխանատվություն է կրում այդ գործունեության համար.

բ) նախապատրաստում և կազմակերպում է ուսումնա-մեթոդական և գիտամեթոդական խորհրդակցություններ, սեմինարներ և հետամուտ է լինում դրանց հանձնարարականների ներդրմանը ուսումնական գործընթացում.

գ) գլխավորում է սերտիֆիկացման աշխատանքները և ուսուցումն ավարտած ունկնդիրներին հանձնում համապատասխան սերտիֆիկատներ.

դ) համալսարանի խարհրդում, գիտխորհրդում, ռեկտորատում և մեթոդական խարհրդում ներկայացնում է լեզվի կենտրոնին վերաբերվող հարցերը

ե) հսկողություն է իրականացնում հաշվապահական հաշվառման, հաշվետվությունների և այդ կարգի այլ փաստաթղթերը ճիշտ կազմելու, պահպանելու և օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ու կարգով ՀՊԱՀ հաշվետվությունը ներկայացնելու նկատմամբ և պատասխանատվություն է կրում դրա համար.

զ) պատասխանատվություն է կրում կենտրոնին հատկացված գույքի պահպանման, ըստ նշանակության և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև իր մեղքով գույքին պատճառած վնասի համար:

է) իրականացնում է իրավաչափ այլ գործունեություն, ելնելով կենտրոնի գործունեության բնույթից և առանձնահատկություններից:

Ընդունելության պայմանները և ուսումնական գործընթացը

16. Ունկնդիրների հավաքագրումը կատարվում է համապատասխան օտար լեզվից նրանց գիտելիքների ստուգման միջոցով և կամընտրական սկզբունքով:

17. Լեզվի ուսուցման կենտրոն կարող են ընդունվել ՀՊԱՀ ցանկացած ֆակուլտետի և կուրսի ուսանողներ, մագիստրանտներ, ասպիրանտներ, դասախոսներ, աշխատակիցներ, ինչպես նաև այլ անձիք ըստ ցանկության:

18. Կենտրոնում գործում են վճարովի և անվճար ուսուցման համակարգեր, որոնցում ընդունելության կանոնները որոշում է ՀՊԱՀ-ի գիտխորհրդի կողմից հաստատված կարգի համաձայն:
19. Կամընտրական դասընթացներում ուսումնական ծրագիրը իրականացվում է ՀՊԱՀ գիտխորհրդի կողմից հաստատված ուսումնական պլանների համաձայն
20. Համապատասխան որակավորման շրջանակներում լեզուների ուսուցման նեղ մասնագիտացումն իրականացվում է ընտրովի դասընթացների միջոցով:
21. Լեզվի կենտրոնում ուսուցումն իրականացվում է արտաժամյա ուսուցման ձևով՝ ժամը 15³⁰-18⁰⁰.
22. Լեզվի կենտրոնում ուսուցումն ավարտվում է միջազգային նմուշի սերտիֆիկատների (վկայականների) շնորհմամբ:

Վճարովի ուսուցման և կենտրոնի անձնակազմի

աշխատանքի վարձատրության կարգը

23. Լեզուների ուսուցման հետ կապված վճարովի ծառայությունները կենտրոնում իրականացվում են ՀՀ կառավարության 2002թ ապրիլի 27-ի “Հայկական գյուղատնտեսական ակադեմիան վերակազմակերպելու մասին” թիվ 471 որոշման 4 կետի “Ժա” ենթակետով համալսարանին տրված լեզուների ուսուցման կազմակերպման լիազորությունների շրջանակներում և “Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին” 2001թ. հոկտեմբերի 10-ի ՀՀ օրենքի 6 հոդ. նախատեսված պայմաններով:
24. Սույն կանոնակարգի 23-րդ կետով նախատեսված լեզուների վճարովի ուսուցման ծառայությունների համար ստացված գումարները կենտրոնը սահմանված կարգով մույթ է անում ՀՊԱՀ հաշվապահության դրամարկղ:
25. Կենտրոնի գույքն ու դրամական միջոցները պատկանում են Հայաստանի պետական ազրարային համալսարանին:
26. Լեզվի կենտրոնի դասախոսական կազմի աշխատանքի վարձատրությունը կատարվում է նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի համաձայն:

27. Լեզվի ուսուցման կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումը կատարում է ՀՊԱՀ կանոնադրության սահմանված կարգով: